

1999/32/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005

թվականի հուլիսի 6-ի 2005/33/ԵՀ հրահանգ

Նավերում գործածվող վառելիքներում ծծմբի պարունակությունը նվազեցնելու մասին

Պաշտոնական տեղեկագիր L 191 , 22.07.2005թ., էջեր 0059 - 0069

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը [1],

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը [2],

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան [3],

Քանի որ

1) Համայնքի բնապահպանական քաղաքականությունը, որը ներկայացված է շրջակա միջավայրի վերաբերյալ գործողությունների ծրագրերում և, մասնավորապես, Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1600/2002/ԵՀ որոշմամբ [4] ու Պայմանագրի 174-րդ հոդվածի հիման վրա ընդունված՝ շրջակա միջավայրի վերաբերյալ Համայնքի գործողությունների 6-րդ ծրագրում (4), նպատակ ունի, մասնավորապես, հասնելու օդի որակի այնպիսի մակարդակի, որն անընդունելի ազդեցության չի ենթարկի և չի վտանգի մարդու առողջությունն ու շրջակա միջավայրը,

2) «Որոշ հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության նվազեցման մասին» Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի հրահանգով [5] սահմանվում է Համայնքում օգտագործվող մագուրի, նավթաթորվածքի (գազային յուղի) և նավերում գործածվող նավթաթորվածքի մեջ ծծմբի պարունակության առավելագույն թույլատրելի չափը,

- 3) 1999/32/ԵՀ հրահանգով Հանձնաժողովից պահանջվում է որոշել, թե ինչ միջոցներ կարելի է ձեռնարկել՝ նավի դիզելային վառելիք չհանդիսացող այլ վառելիքի այրման հետևանքով առաջացող թթվեցումը նվազեցնելու համար, և, հարկ եղած դեպքում, առաջարկ ներկայացնել,
- 4) նավարկությունների ժամանակ ծծմբի արտանետումները, որոնք պայմանավորված են նավերում ծծմբի մեծ պարունակությամբ վառելիքի այրմամբ, նպաստում են օդի աղտոտմանը ծծմբի երկօքսիդով և պինդ մասնիկներով, որոնք վնաս են հասցնում մարդու առողջությանը, վնասակար են պետական ու սեփական գույքի, մշակութային ժառանգության համար և նպաստում են թթվեցմանը,
- 5) ավիամերձ գոտիներում և նավահանգիստների մոտակայքում ապրող մարդիկ և շրջակա միջավայրը հատկապես ենթակա են ծծմբի մեծ պարունակությամբ վառելիքով աշխատող նավերից առաջացող աղտոտմանը: Ուստի, այդ առումով պահանջվում են հատուկ միջոցառումներ,
- 6) սույն Հրահանգով սահմանված միջոցառումները լրացնում են Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001/81/ԵՀ հրահանգով [6] սահմանված՝ անդամ պետությունների ազգային միջոցառումները, որոնք նախատեսված են մթնոլորտն աղտոտող նյութերի առավելագույն սահմաններին համապատասխանելու համար,
- 7) վառելիքներում ծծմբի պարունակության նվազեցումը որոշակի առավելություններ ունի նավերի համար գործող արդյունավետության ու սպասարկման ծախսերի առումով. այն նպաստում է արտանետումների նվազեցման այնպիսի տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործմանը, ինչպիսիք են ընտրովի կատալիզատորների չեզոքացումը,
- 8) Պայմանագրով պահանջվում է ուշադրություն դարձնել Համայնքի ծայրամասային (հեռավոր) շրջանների, մասնավորապես, Ֆրանսիայի անդրծովյան տիրույթների, Ազորյան և Մադեյրայի ու Կանարյան կղզիների հատուկ բնութագրերին,
- 9) 1997 թվականին դիվանագիտական համաժողովն ընդունեց «Նավերից աղտոտող նյութերի արտանետումների կանխման մասին» 1973 թվականի միջազգային կոնվենցիան փոփոխող արձանագրություն՝ փոփոխված դրան կից 1978 թվականի արձանագրությամբ (այսուհետ՝ ՄԱՐՓՈԼ): Այդ արձանագրությամբ ՄԱՐՓՈԼ-ին ավելանում է նավերից առաջացող օդի աղտոտումը կանխարգելելու մասին կանոնակարգեր պարունակող նոր՝ VI հավելվածը: 1997 թվականի արձանագրությունը և, հետևաբար, ՄԱՐՓՈԼ-ի VI հավելվածն ուժի մեջ են մտել 2005 թվականի մայիսի 19-ին,

10) ՄԱՐՓՈԼ–ի VI հավելվածով որոշակի տարածքներ սահմանվում են որպես Ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքներ (այսուհետ՝ Ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքներ): Այդ հավելվածի համաձայն՝ Բալթիկ ծովն արդեն սահմանվել է որպես այդպիսի տարածք: VI հավելվածն ուժի մեջ մտնելուց հետո ընդունվեց Միջազգային ծովային կազմակերպության (ՄԾԿ) շրջանակներում անցկացրած քննարկումների արդյունքում ընդունված՝ Հյուսիսային ծովը՝ ներառյալ Լա Մանշ նեղուցը, որպես Ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածք սահմանելու սկզբունքի մասին համաձայնագիրը,

11) հաշվի առնելով ծովային նավարկության գլոբալ բնույթը՝ պետք է ջանքեր գործադրվեն՝ միջազգային լուծումներ գտնելու համար: Թե՛ Հանձնաժողովը, թե՛ անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ նվազեցնելու համար (կրճատելու) ՄԾԿ–ի շրջանակներում՝ նավերում գործածվող վառելիքներում ծծմբի պարունակության առավելագույն թույլատրելի չափն ամբողջ աշխարհում, այդ թվում՝ ուսումնասիրելով նոր ծովային տարածքները, ՄԱՐՓՈԼ–ի VI հավելվածի համաձայն, որպես Ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածք սահմանելու առավելությունները (էությունը),

12) նավերում գործածվող վառելիքներում ծծմբի պարունակության մասով պարտավորությունների կատարումն անհրաժեշտ է՝ սույն Հրահանգի նպատակներին հասնելու համար: Արդյունավետ նմուշառումը և տարհամոզիչ պատժամիջոցները Համայնքի ամբողջ տարածքում անհրաժեշտ են՝ սույն Հրահանգի ճշգրիտ կիրարկումն ապահովելու համար: Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն հարկադրական միջոցներ՝ տվյալ պետության դրոշի տակ նավարկող նավերի և այդ պետության նավահանգիստներում գտնվելու ընթացքում բոլոր դրոշների տակ նավարկող նավերի համար: Անդամ պետությունների համար նպատակահարմար է սերտ համագործակցել և ձեռնարկել հավելյալ հարկադրական միջոցներ այլ նավերի համար՝ համաձայն միջազգային ծովային իրավունքի,

13) նավահանգիստներում խարիսխ գցած նավերում գործածվող վառելիքի մեջ ծծմբի պարունակության առավելագույն թույլատրելի չափն ըստ քաշի՝ 0,1 % –ով սահմանափակելու, արդյունաբերության ծովային ոլորտում տեխնիկական փոփոխություններ կատարելու նպատակով բավարար ժամանակ տրամադրելու համար, սույն պահանջի կիրառման օրը պետք է լինի 2010 թվականի հունվարի 1-ը: Քանի որ այդ վերջնաժամկետը կարող է տեխնիկական խնդիրներ առաջացնել Հունաստանի համար,

նպատակահարմար է ժամանակավոր շեղումներ սահմանել Հունաստանի Հանրապետության տարածքում նավարկող որոշ նավերի համար,

14) սույն Հրահանգը պետք է դիտվի որպես առաջին քայլ՝ ծովային տրանսպորտից առաջացող արտանետումները կրճատելու (նվազեցնելու), արտանետումների նվազեցման տեխնոլոգիաների և վառելիքներում ծծմբի պարունակության թույլատրելի ավելի ցածր չափի միջոցով հետագայում արտանետումների կրճատման համար և տնտեսական գործիքներին որպես էական կրճատումների հասնելու խթան օգտագործելու նպատակով առաջարկվող հեռանկարների մշտական գործընթացում,

15) կարևոր է ուժեղացնել անդամ պետությունների դիրքերը ՄԾԿ-ի շրջանակներում անցկացվող բանակցություններում, մասնավորապես, ՄԱՐՓՈԼ-ի VI հավելվածի վերանայման փուլում, խթանել ավելի հավակնոտ միջոցառումների ձեռնարկմանը՝ նավերում գործածվող մազութում ծծմբի պարունակության առավելագույն թույլատրելի չափը նվազեցնելու և արտանետումները նվազեցնելու համարժեք այլընտրանքային միջոցների մասով,

16) ՄԾԿ-ն (Միջազգային ծովային կազմակերպություն) ժողովի իր A.926(22) որոշման մեջ կառավարություններին, մասնավորապես, Ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքների կառավարություններին, առաջարկեց իրենց իրավասության սահմաններում գտնվող տարածքներում ապահովել մազութում ծծմբի ցածր պարունակության հասանելիությունը և կոչ արեց նավթարդյունաբերության ու նավթ առաքող կազմակերպություններին՝ նպաստել մազութում ծծմբի ցածր պարունակության հասանելիությանն ու օգտագործմանը: Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան գործողություններ՝ ապահովելու, որ նավերում գործածվող վառելիքի տեղական մատակարարողները համապատասխան վառելիքը հասանելի դարձնեն՝ նշված պահանջը բավարար չափաքանակով բավարարելու համար,

17) ՄԾԿ-ն ընդունել է մազութի նմուշառման ուղեցույցներ՝ ՄԱՐՓՈԼ-ի VI հավելվածին համապատասխանությունը սահմանելու համար. այն պետք է ուղեցույցներ մշակի նաև արտանետված գազի մաքրման համակարգերի և Ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքներում ծծմբի երկօքսիդի արտանետումները սահմանափակելու այլ տեխնոլոգիական մեթոդների համար,

18) «Աղբի այրման սարքավորումներից որոշ աղտոտող նյութերի արտանետումների նվազեցման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի

հոկտեմբերի 23-ի հրահանգը [7] վերամշակվել է Խորհրդի 88/609/ԵՏՀ հրահանգով [8]: 1999/32/ԵՀ հրահանգը պետք է համապատասխանաբար վերանայվի, ինչպես նախատեսված է դրա 3(4) հոդվածով,

19) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2099/2002 կանոնակարգով սահմանված՝ Անվտանգ ջրերից և նավերից արտանետումների կանխման հարցերով գործող կոմիտեի [9] համար արտանետումների նվազեցման տեխնոլոգիաների հաստատման համատեքստում նպատակահարմար է աջակցել Հանձնաժողովին,

20) արտանետումների նվազեցման տեխնոլոգիաների միջոցով կարելի է հասնել արտանետումների համարժեք կամ նույնիսկ ավելի մեծ նվազեցումների, քան ծծմբի ավելի ցածր պարունակություն օգտագործելով՝ պայմանով, որ այդ տեխնոլոգիաները բացասական ազդեցություն չեն ունենա էկոհամակարգերի վրա և կմշակվեն՝ ենթարկվելով համապատասխան հաստատման և հսկողության մեխանիզմների: Կարևոր է, որ ճիշտ պայմաններ առկա լինեն՝ արտանետումների նվազեցման նոր տեխնոլոգիաների մշակմանը նպաստելու համար,

21) Ծովագնացության անվտանգության եվրոպական գործակալությունը պետք է աջակցի Հանձնաժողովին և անդամ պետություններին՝ սույն Հրահանգի կիրարկման դիտանցումն իրականացնելու հարցում,

22) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն համաձայն 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշման, որով սահմանվում են Հանձնաժողովին վերապահված իրավասությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը [10],

23) Ուստի, պետք է համապատասխանաբար փոփոխություններ կատարել 1999/32/ԵՀ հրահանգում,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1999/32/ԵՏՀ հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 1(2) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Որոշ հեղուկ նավթային վառելիքների այրումից առաջացող ծծմբի երկօքսիդի արտանետումների նվազեցումը պետք է իրականացվի՝ նման վառելիքներում ծծմբի երկօքսիդի սահմանային թույլատրելի կոնցենտրացիա սահմանելու միջոցով՝ որպես դրանց օգտագործման պայման անդամ պետության տարածքում, տարածքային ջրերում և բացառիկ տնտեսական գոտիներում կամ աղտոտման վերահսկման գոտիներում:

Որոշ հեղուկ նավթային վառելիքներում ծծմբի՝ սույն Հրահանգով նախատեսված սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, այնուամենայնիվ, չի կիրառվում՝

ա) հետազոտությունների և փորձարկման նպատակների համար նախատեսված վառելիքների նկատմամբ.

բ) վերջնական այրումից առաջ վերամշակման համար նախատեսված վառելիքների նկատմամբ.

գ) այն վառելիքների նկատմամբ, որոնք պետք է վերամշակման ենթարկվեն զտման գործարաններում.

դ) այն վառելիքների նկատմամբ, որոնք օգտագործվում են և շուկա են արտահանվել Համայնքի հեռավոր շրջաններում, եթե համապատասխան անդամ պետություններն ապահովում են, որ՝

- հաշվի են առնված օդի որակի չափորոշիչները.

- մագուղը չի օգտագործվում, եթե դրանում ծծմբի կոնցենտրացիան գերազանցում է 3%-ը՝ ըստ զանգվածի.

զ) այն վառելիքների նկատմամբ, որոնք զինվորական ծառայության ժամանակ օգտագործվում են ռազմական նավերում: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր անդամ պետություն, ընդունելով նման նավերի գործունեությունը կամ գործառական կարողությունները չսահմանափակող միջոցներ, պետք է ձգտի ապահովել, որ այս նավերի գործունեությունը, հնարավորության և իրագործելիության սահմաններում, իրականացվում է սույն Հրահանգին համապատասխան կարգով.

է) այն դեպքերում, երբ վառելիքը նավում օգտագործվում է՝ նավի վրա անվտանգությունն ապահովելու կամ ծովում փրկարարական որոշակի նպատակներով.

ը) այն դեպքերում, երբ վառելիքը նավում օգտագործվում է, քանի որ նավին կամ նավի սարքավորմանը վնաս է հասցվել, եթե պատճառված վնասից հետո ձեռնարկվում են

բոլոր հնարավոր միջոցները՝ մեծ քանակությամբ արտանետումները կանխելու կամ դրանք նվազեցնելու ուղղությամբ, և եթե հնարավորինս շուտ միջոցներ են ձեռնարկվում՝ հասցված վնասը վերականգնելու ուղղությամբ: Սա չի կիրառվում, եթե նավի սեփականատերը կամ նավապետը գործել են անզգուշաբար կամ ցանկացել են վնաս հասցնել:

թ) այն նավերում օգտագործվող վառելիքների նկատմամբ, որոնք ապահովված են արտանետումները նվազեցնող տեխնոլոգիաներով՝ համաձայն 4(գ) հոդվածի:».

2. 2-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 1-ին կետի առաջին պարբերությոնը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«– ՀԱ 2710 19 51 կամ 2710 19 69 ծածկագրերին դասվող ցանկացած հեղուկ նավթային վառելիք՝ բացառությամբ նավերում օգտագործվող վառելիքի, կամ»

բ) 2-րդ կետի առաջին ենթապարբերությունը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

«Նավթաթորվածք նշանակում է՝

- ՀԱ 2710 19 25, 2710 19 29, 2710 19 45 կամ 2710 19 49 ծածկագրերին դասվող ցանկացած հեղուկ նավթային վառելիք՝ բացառությամբ նավերում օգտագործվող վառելիքի, կամ
- բացառությամբ նավերում օգտագործվող վառելիքի՝ ցանկացած հեղուկ նավթային վառելիք, որը 65 %-ից ավելի քիչ՝ ըստ ծավալի (ներառյալ կորուստները), թորման է ենթարկվում 250 օC-ում, և որի 85 %-ը՝ ըստ ծավալի (ներառյալ կորուստները), թորման է ենթարկվում 350 օC-ում՝ ըստ ԱՍՏՄ D86 մեթոդի:».

գ) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"3. նավերում գործածվող վառելիք՝ նշանակում է ցանկացած հեղուկ նավթային վառելիք, որը նախատեսված է նավերում գործածման համար՝ ներառյալ այն վառելիքները, որոնք սահմանված են ISO 8217 ստանդարտում:

դ) հետևյալ կետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ.

«3ա. նավերում գործածվող դիզելային վառելիք՝ նշանակում է նավերում գործածվող ցանկացած վառելիք, որի մածուցիկությունը և խտությունը ISO 8217 աղյուսակի DMB և DMC կարգերի համար նախատեսված մածուցիկության և խտության սահմաններում են.

3բ. նավերում գործածվող նավթաթորվածք՝ նշանակում է նավերում գործածվող ցանկացած վառելիք, որի մածուցիկությունը և խտությունը ISO 8217 աղյուսակի DMB և DMC կարգերի համար նախատեսված մածուցիկության և խտության սահմաններում են.

3գ. ՄԱՐՓՈԼ (Ծովի աղտոտում) նշանակում է «Նավերից աղտոտող նյութերի արտանետումների կանխման մասին» 1973 թվականի միջազգային կոնվենցիա՝ փոփոխված դրան կից 1978 թվականի արձանագրությամբ.

3դ. ՄԱՐՓՈԼ-ի VI հավելված՝ նշանակում է «Նավերից աղտոտող նյութերի արտանետումների կանխման կանոնակարգեր» վերնագրով հավելված, որը 1997 թվականի արձանագրությամբ ավելանում է ՄԱՐՓՈԼ-ին.

3ե. ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքներ՝ նշանակում է այն տարածքները, որոնք սահմանված են Միջազգային ծովային կազմակերպության կողմից՝ ՄԱՐՓՈԼ-ի VI արձանագրության համաձայն.

3զ. մարդատար նավ՝ նշանակում է այնպիսի նավ, որը տեղափոխում է ավելի քան 12 ուղևոր, և ուղևորների մեջ չեն մտնում՝

i) նավապետը և անձնակազմի անդամները, կամ նավի վրա այդ նավի համար աշխատանքի անցած կամ ցանկացած այլ կերպ նավին վերաբերող գործերում ներգրավված անձ.

ii) մեկ տարեկանից փոքր երեխա.

3է. կանոնավոր ծառայություններ՝ նշանակում է նավով ուղևորների փոխադրումներ, որոնք իրականացվում են երկու կամ ավելի նավահանգիստների միջև երթևեկությունն ապահովելու նպատակով, կամ ուղևորություններ մի նավահանգստից և դեպի այդ նավահանգիստ՝ առանց կանգ առնելու այլ նավահանգիստներում՝

i) ըստ հրապարակված ժամանակացույցի, կամ

ii) այնքան կանոնավոր կամ հաճախակի փոխադրումներով, որ դրանք կարող են հայտնի ժամանակացույց համարվել.

3ը. ռազմական նավ նշանակում է որևէ պետության զինված ուժերին պատկանող նավ, որն ունի այն արտաքին նշանները, որոնցով առանձնանում է տվյալ պետության նման նավերից, և որը ղեկավարում է այն պաշտոնյան, որը պատշաճ կերպով նշանակվել է պետության կառավարության կողմից, և ում անունը կա համապատասխան

ծառայողական ցուցակում, և նավը զինված է անձնակազմով, որը զինված ուժերի կանոնավոր վերահսկողության տակ է.

3թ. խարիսխ գցած նավ՝ նշանակում է այն նավը, որը խարիսխ է գցել Համայնքի նավահանգստում, մինչ իրականացվում է բեռնումը, բեռնաթափումը կամ կայանումը՝ ներառյալ այն ժամանակը, որի ընթացքում բեռների հետ կապված գործողություններ չեն իրականացվում.

3ժ. ներքին ջրային ուղիների տրանսպորտ (նավ)՝ նշանակում է «Ներքին ջրային ուղիների տրանսպորտի նկատմամբ տեխնիկական պահանջներ սահմանելու մասին» Խորհրդի 1982 թվականի հոկտեմբերի 4-ի 82/714/ԵՏՀ հրահանգով սահմանված՝ ներքին ջրային ուղիներում օգտագործվելու համար նախատեսված տրանսպորտ [11], այդ թվում՝ տրանսպորտի այն բոլոր տեսակները, որոնք ունեն.

i) ներքին ջրերում նավարկության համար Համայնքի կողմից տրվող վկայագիր, ինչպես սահմանված է 82/714/ԵՏՀ հրահանգով,

ii) Հռենոս գետով նավարկելու մասին վերանայված կոնվենցիայի 22-րդ հոդվածի համաձայն տրամադրվող վկայագիր,

3ժա. շուկայահանում՝ նշանակում է նավերում գործածվող վառելիքի առաքում կամ տրամադրում երրորդ անձանց, վճարի դիմաց կամ անվճար, ցանկացած վայրում, որը մտնում է անդամ պետությունների իրավասության շրջանակի մեջ. Այն բացառում է նավերում գործածվող վառելիքի առաքումը կամ տրամադրումը նավերի բեռնային ցիստեռներով,

3ժբ. Հեռավոր շրջաններ՝ նշանակում է Ֆրանսիայի արտասահմանյան գերատեսչություններ, Ազորյան, Մադեյրա և Կանարյան կղզիներ՝ համաձայն Պայմանագրի 299-րդ հոդվածի.

3ժգ. արտանետումների նվազեցման տեխնոլոգիա՝ նշանակում է արտանետված գազի մաքրման համակարգ կամ ցանկացած այլ տեխնոլոգիական մեթոդ, որը ենթակա է ստուգման և կիրառման.

ե) 6-րդ կետը հանել:

3. 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 3

Մագուրում ծծմբի պարունակության առավելագույն թույլատրելի չափը

1. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու համար, որ 2003 թվականի հունվարի 1-ից մագուրը չգործածվի, եթե դրանում ծծմբի պարունակությունը գերազանցում է 1%-ը՝ ըստ զանգվածի:

i) Իրավասու մարմինների կողմից արտանետումների համապատասխան դիտանցման համաձայն՝ սույն պահանջը չի կիրառվում այն մագուրի նկատմամբ, որն օգտագործվում է՝

ա) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի «Աղբի այրման սարքավորումներից որոշ աղտոտող նյութերի արտանետումների նվազեցման մասին» 2001/80/ԵՀ հրահանգով կարգավորվող՝ աղբի այրման սարքավորումներում, որոնք համարվում են նոր՝ համաձայն հրահանգի 2(9) հոդվածի սահմանման, և որոնք համապատասխանում են այդ հրահանգի IV հավելվածով նման սարքավորումների համար սահմանված ծծմբի երկօքսիդի արտանետումների սահմանաչափին և կիրառվում են դրա 4-րդ հոդվածի համաձայն.

բ) աղբի այրման սարքավորումներում, որոնք կարգավորվում են 2001/80/ԵՀ հրահանգով, և որոնք համարվում են գործող՝ համաձայն հրահանգի 2(10) հոդվածի սահմանման, եթե աղբի այրման այս սարքավորումներից ծծմբի երկօքսիդի արտանետումները հավասար կամ պակաս են 1700 մգ/Nm³-ից՝ չոր զանգվածով 3% ըստ ծավալի վառման գազերի թթվածնի պարունակության մեջ, և եթե 2008 թվականի հունվարի 1-ից 2001/80/ԵՀ հրահանգի 4(3)(ա) հոդվածով կարգավորվող աղբի այրման սարքավորումներից ծծմբի երկօքսիդի արտանետումները հավասար են կամ պակաս այն արտանետումներից, որոնք համապատասխանում են այդ հրահանգի IV հավելվածի Ա մասում նշված նոր սարքավորումներից ծծմբի երկօքսիդի արտանետումների սահմանաչափին և, անհրաժեշտության դեպքում, այդ հրահանգի 5-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների կիրառմամբ.

գ) աղբի այրման այլ սարքավորումներում, որոնք չեն մտնում (ա) և (բ) կետերի մեջ, եթե ծծմբի երկօքսիդի արտանետումներն աղբի այրման այս սարքավորումներից չոր զանգվածով 3%՝ ըստ ծավալի վառման գազերի թթվածնի պարունակության մեջ չեն գերազանցում 1700 մգ/Nm³ -ը.

դ) այրման նպատակներով այն զտման գործարաններում, որտեղ ծծմբի երկօքսիդի արտանետումների ամսական միջին քանակը, որը կազմում է զտման գործարանի բոլոր

սարքավորումներից արտանետումների միջին քանակը՝ անկախ օգտագործվող վառելիքի կամ վառելիքի խառնուրդի տեսակից, համապատասխանում է այն սահմանաչափին, որը պետք է սահմանի յուրաքանչյուր անդամ պետություն, և որը չի գերազանցում 1700 մգ/ՈւՄՅ-ը: Սա չի կիրառվում այրման այն սարքավորումների նկատմամբ, որոնք մտնում են (ա) կետի մեջ կամ, սկսած 2008 թվականի հունվարի 1-ից, այն սարքավորումների նկատմամբ, որոնք մտնում են (բ) կետի մեջ:

ii) Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ աղբի այրման ցանկացած սարքավորում, որում օգտագործվում է 1-ին պարբերության մեջ նշված ծծմբի կոնցենտրացիայից ավելի մեծ կոնցենտրացիայով մագուիթ, չշահագործվի առանց իրավասու մարմնի կողմից տրված թույլտվության, որում սահմանված են արտանետումների սահմանաչափերը:

3. 2-րդ պարբերության դրույթները պետք է վերանայվեն և, անհրաժեշտության դեպքում, փոփոխվեն՝ հաշվի առնելով 2001/80/ԵՀ հրահանգի հետագա փոփոխությունները:

4. 4-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 2010 թվականի հունվարի 1-ից.

i) 1-ին պարբերությունում հանել «ներառյալ նավերում գործածվող նավթաթորվածք» բառերը,

ii) 2-րդ պարբերությունը հանել,

բ) 2005 թվականի օգոստոսի 11-ից սկսած հանել 3-րդ և 4-րդ պարբերությունները,

5. Ավելացնել հետևյալ հոդվածները.

«Հոդված 4ա

Ծծմբի պարունակության առավելագույն թույլատրելի չափը նավերում գործածվող վառելիքներում, որոնք օգտագործվում են ծծմբի երկօքսիդի վերահսկման տարածքներում և դեպի Համայնքի նավահանգիստներ կամ նավահանգիստներից կանոնավոր ծառայություններ մատուցող մարդատար նավերում

1. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ նավերում գործածվող վառելիքը չօգտագործվի տարածքային ջրերում, բացառիկ տնտեսական գոտիներում և ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքների մեջ մտնող աղտոտման վերահսկման գոտիներում, եթե այդ վառելիքում

ծծմբի պարունակությունը գերազանցում է 1,5%-ը՝ ըստ զանգվածի: Սա կիրառվում է բոլոր դրոշների տակ նավարկող բոլոր նավերի նկատմամբ՝ ներառյալ այն նավերը, որոնց ուղևորությունն սկսվել է Համայնքի տարածքից դուրս:

2. 1-ին պարբերության կիրառման օրերն են՝

ա) ՄԱՐՓՈԼ-ի VI հավելվածի 14(3)(ա) կանոնակարգում նշված Բալթիկյան ծովի տարածաշրջանի համար՝ 2006 թվականի օգոստոսի 11-ը.

բ) Հյուսիսային ծովի համար՝

սահմանված ընթացակարգերի համաձայն՝ Միջազգային ծովային կազմակերպության սահմանումն ուժի մեջ մտնելուց 12 ամիս հետո

2007 թվականի օգոստոսի 11-ը.

այս երկու օրից այն օրը, որն ավելի վաղ է.

գ) ցանկացած այլ ծովային տարածաշրջանի համար՝ ներառյալ նավահանգիստները, որոնք Միջազգային ծովային կազմակերպությունը սահմանում է որպես ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածք՝ համաձայն ՄԱՐՓՈԼ-ի VI հավելվածի 14(3)(բ) կանոնակարգի: Սահմանումն (որոշումն) ուժի մեջ մտնելուց 12 ամիս հետո:

3. Անդամ պետությունները պատասխանատու են 1-ին պարբերության կիրառման համար առնվազն հետևյալի մասով՝

տվյալ պետության դրոշի տակ նավարկող նավերի, կամ

իրենց պետության նավահանգիստներում գտնվող բոլոր դրոշների տակ նավարկող նավերի այն դեպքերում, երբ անդամ պետությունը սահմանակցում է ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքներին:

Անդամ պետությունները կարող են ձեռնարկել հավելյալ հարկադրական միջոցներ այլ նավերի նկատմամբ՝ համաձայն միջազգային ծովային իրավունքի:

4. Սկսած 2(ա) պարբերության մեջ նշված օրվանից՝ անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ նավերում գործածվող վառելիքը չօգտագործվի իրենց պետության տերիտորիալ ջրերում, բացառիկ տնտեսական գոտիներում և աղտոտման վերահսկման գոտիներում նավարկող մարդատար նավերում, որոնք մատուցում են կանոնավոր ծառայություններ Համայնքի

նավահանգիստներից կամ դեպի այդ նավահանգիստներ, եթե այդ վառելիքում ծծմբի պարունակությունը գերազանցում է 1,5%-ը՝ ըստ զանգվածի: Անդամ պետությունները պատասխանատու են սույն պահանջի կատարման համար առնվազն իրենց դրոշների տակ նավարկող նավերի և բոլոր դրոշների տակ նավարկող նավերի համար, եթե այդ նավերը գտնվում են իրենց նավահանգիստներում:

5. 2(ա) պարբերության մեջ նշված օրվանից անդամ պետությունները պետք է պահանջեն նավերի գրանցամատյանների պատշաճ լրացում՝ ներառելով վառելիքը փոխելու գործողությունները որպես նավերի համար Համայնքի նավահանգիստներ մտնելու պայման:

6. 2(ա) պարբերության մեջ նշված օրվանից և համաձայն ՄԱՐՓՈԼ-ի VI հավելվածի 14(3)(ա) կանոնակարգի՝ անդամ պետությունները՝

գրանցում են նավերում գործածվող վառելիքի տեղական մատակարարողներին.

ապահովում են, որ ծծմբի պարունակությունը նավերում գործածվող այն վառելիքներում, որոնք վաճառվում են իրենց պետության տարածքում, մատակարարողի կողմից գրանցվեն վառելիքի մատակարարման պայմանագրում, որը ներկայացվում է կնքված օրինակին կից՝ ստորագրված վառելիքն ստացող նավի ներկայացուցչի կողմից.

ձեռնարկում են համապատասխան գործողություններ նավերում գործածվող վառելիքի այն մատակարարների դեմ, ովքեր մատակարարել են այնպիսի վառելիք, որը չի համապատասխանում վառելիքի մատակարարման պայմանագրում նշված բնութագրին.

ապահովում են, որ ձեռնարկվեն համապատասխան իրավապաշտպան գործողություններ՝ հայտնաբերված ոչ համապատասխան վառելիքի համապատասխանությունն ապահովելու համար:

7. 2(ա) պարբերության մեջ նշված օրվանից անդամ պետություններն ապահովում են, որ նավերում գործածվող դիզելային վառելիքներն իրենց պետության տարածքում չարտահանվեն շուկա, եթե նավերում գործածվող դիզելային այդ վառելիքներում ծծմբի պարունակությունը գերազանցում 1,5%-ը՝ ըստ զանգվածի:

Հանձնաժողովն անդամ պետություններին տեղեկացնում է 2(բ) պարբերության մեջ նշված կիրառման օրերի մասին և դրանք հրապարակում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

Հոդված 4բ

Ծծմբի պարունակության առավելագույն թույլատրելի չափը՝ Համայնքի նավահանգիստներում խարիսխ գցած ներքին ջրային ուղիների տրանսպորտում և նավերում գործածվող վառելիքներում

1. 2010 թվականի հունվարի 1-ից անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ հետևյալ նավերում չգործածվեն այնպիսի վառելիքներ, որոնցում ծծմբի պարունակությունը գերազանցում է 0,1 %-ը ըստ զանգվածի՝

ա) ներքին ջրային ուղիների տրանսպորտ, և

բ) Համայնքի նավահանգիստներում խարիսխ գցած նավերում՝ հատկացնելով բավարար ժամանակ, որպեսզի անձնակազմը վերջացնի վառելիքը փոխելու գործողությունները հնարավորինս շուտ նավամատույց հասնելուց հետո և հնարավորինս ուշ մեկնումից առաջ:

Անդամ պետությունները պետք է պահանջեն վառելիքը փոխելու ցանկացած գործողության ժամանակը գրանցել նավի գրանցամատյաններում:

2. 1-ին պարբերությունը չի կիրառվում՝

ա) այն դեպքերում, երբ նավերը, համաձայն հրապարակված (հայտարարված) ժամանակացույցների, նավամատույցում պետք է մնան 2 ժամից պակաս.

ներքին ջրային տրանսպորտի նկատմամբ, որն ունի 1974 թվականի «Ծովում կյանքի անվտանգության մասին» միջազգային կոնվենցիայի հետ համապատասխանությունը հաստատող վկայագիր՝ փոփոխված այդ նավերի՝ ծովում գտնվելու ժամանակ

գ) մինչև 2012 թվականի հունվարի 1-ը այն նավերի նկատմամբ, որոնք նշված են հավելվածում և նավարկում են բացառապես Հունաստանի Հանրապետության տարածքում.

դ) այն նավերի նկատմամբ, որոնք նավահանգիստներում գտնվելու ժամանակ անջատում են բոլոր շարժիչները և օգտվում են առափնյա էլեկտրականությունից:

3. 2010 թվականի հունվարի 1-ից անդամ պետություններն ապահովում են, որ նավերում գործածվող նավթաթորվածքները չարտահանվեն շուկա իրենց պետության տարածքում,

եթե այդ նավթաթորվածքներում ծծմբի պարունակությունը գերազանցում է 0,1 %-ը՝ ըստ զանգվածի:

Հոդված 4գ

Փորձարկումները և արտանետումների նվազեցման նոր տեխնոլոգիաների կիրառումը

1. Անդամ պետությունները կարող են, համագործակցելով այլ անդամ պետությունների հետ, անհրաժեշտության դեպքում, թույլ տալ նավերից արտանետումների նվազեցման տեխնոլոգիաների փորձարկումներ տվյալ պետության դրոշի տակ նավարկող նավերի վրա կամ իրենց իրավասության տակ գտնվող ծովային տարածքներում: Այս փորձարկումների ժամանակ 4(ա) և 4(բ) հոդվածների պահանջները բավարարող վառելիքի գործածումը պարտադիր չէ, եթե՝

Հանձնաժողովին և համապատասխան նավահանգստային պետությանը գրավոր տեղեկացնում են փորձարկումների մեկնարկից առնվազն վեց ամիս առաջ.

փորձարկումների տևողությունը չի գերազանցում 18 ամիսը.

ներգրավված բոլոր նավերն ապահովված են գազի արտանետումների մշտական վերահսկման սարքավորմամբ, որն օգտագործվում է փորձարկման ամբողջ ընթացքում.

բոլոր ներգրավված նավերն իրականացնում են արտանետումների կրճատումներ, որոնք առնվազն համապատասխանում են այն կրճատումներին, որը կիրառործվեն վառելիքում ծծմբի՝ սույն Հրահանգում նշված սահմանաչափերի կիրառման միջոցով.

կան թափոնների վերահսկման պատշաճ համակարգեր՝ արտանետումների նվազեցման տեխնոլոգիաների փորձարկման շրջանի ընթացքում առաջացած բոլոր թափոնների համար.

փորձարկումների ամբողջ շրջանի ընթացքում իրականացվում է ծովային շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատում, մասնավորապես փակ նավահանգիստների, նավակայանների և գետաբերանների էկոհամակարգերի վրա, և

վերջնական արդյունքները տրամադրվում են Հանձնաժողովին և մատչելի են դարձվում հանրությանը փորձարկումների շրջանի ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:

2. Անդամ պետության դրոշի տակ նավարկող նավերի համար արտանետումների նվազեցման տեխնոլոգիաները հաստատվում են անվտանգ ջրերի և նավերից արտանետումների կանխման հարցերով կոմիտե ստեղծող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 2099/2002 կանոնակարգի (ԵՀ) 3(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն՝ հաշվի առնելով՝

այն ուղեցույցները, որոնք պետք է մշակվեն ՄԾԿ-ի կողմից.

1-ին պարբերության համաձայն իրականացված փորձարկումների արդյունքները.

շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ ներառյալ արտանետումների հնարավոր կրճատումները, և ազդեցությունները փակ նավահանգիստների, նավակայանների և գետաբերանների էկոհամակարգերի վրա.

դիտանցման և ստուգման իրազդեցիկությունը:

3. Համայնքում բոլոր դրոշների տակ նավարկող նավերում արտանետման նվազեցման տեխնոլոգիաների օգտագործման չափանիշները սահմանվում են 9(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն: Հանձնաժողովը այս չափանիշների մասին տեղեկացնում է ՄԾԿ-ին:

4. Որպես 4(ա) և 4(բ) հոդվածներով սահմանված պահանջները բավարարող ծծմբի ցածր պարունակությամբ վառելիքի այլընտրանք՝ անդամ պետությունները կարող են թույլ տալ նավերին օգտագործել արտանետումների նվազեցման տեխնոլոգիա՝ պայմանով, որ այս նավերը՝

անընդհատ իրականացնում են արտանետումների կրճատումներ, որոնք առնվազն համապատասխանում են այն կրճատումներին, որոնք կիրառործվեն վառելիքում ծծմբի՝ սույն Հրահանգում նշված սահմանաչափերի կիրառման միջոցով.

ապահովված են արտանետումների դիտանցման վերահսկման սարքավորումներով, և

արձանագրում են, որ փակ նավահանգիստներ, նավակայաններ և գետաբերաններ արտանետված թափոնները ոչ մի ազդեցություն չունեն էկոհամակարգերի վրա՝ հիմնվելով նավահանգստային պետությունների իշխանությունների կողմից ՄԾԿ-ին հաղորդած չափանիշների վրա:».

6. 6-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) լրացնել հետևյալ պարբերությունը՝

«1ա. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու, որ նավերում գործածվող վառելիքում ծծմբի պարունակությունը համապատասխանի 4ա և 4բ հոդվածների համապատասխան դրույթներին:

Պետք է կիրառվեն, համապատասխանաբար, նմուշառման, վերլուծության և ստուգման հետևյալ ձևերից յուրաքանչյուրը.

նավերի համար գործածվող վառելիքի նմուշառում նավերին մատակարարելու ընթացքում՝ հետևելով ՄԾԿ-ի ուղեցույցներին, և դրանում ծծմբի պարունակության վերլուծություն.

անհրաժեշտության դեպքում, նավերի վրա ցիստեռններում և կապարակնքված զետեղարանում պահվող՝ նավերում գործածվող վառելիքում ծծմբի պարունակության նմուշառում և վերլուծություն,

նավի գրանցամատյանի և վառելիքի մատակարարման պայմանագրերի ստուգում.

Նմուշառումն սկսվում է վառելիքում ծծմբի պարունակության առավելագույն թույլատրելի չափն ուժի մեջ մտնելու օրվանից: Այն իրականացվում է բավարար հաճախականությամբ, բավարար չափաքանակներով և այնպիսի եղանակով, որ նմուշները ճշգրտորեն ներկայացնեն ստուգվող վառելիքը և այն վառելիքը, որը գործածվում է համապատասխան ծովային տարածքներում և նավահանգիստներում գտնվող նավերում:

Անդամ պետությունները նաև ձեռնարկում են համապատասխան միջոցներ, անհրաժեշտության դեպքում, դիտանցելու ծծմբի պարունակությունը նավերում գործածվող այն վառելիքներում, որոնց նկատմամբ չեն կիրառվում 4(ա) և 4(բ) հոդվածները:».

բ) 2-ին պարբերության մեջ (ա) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա) մազութի և նավերում գործածվող վառելիքների համար ISO 8754 (1992) մեթոդով և PrEN ISO 14596 մեթոդով.».».

7. 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 7

Հաշվետվություն ու վերանայում

1. 6-րդ հոդվածի համաձայն իրականացված նմուշառման, վերլուծության և ստուգումների արդյունքների հիման վրա անդամ պետություններն ամեն տարի մինչև հունիսի 30-ը սույն հրահանգի շրջանակի մեջ մտնող և իրենց պետության տարածքում նախորդ օրացուցային տարվա ընթացքում օգտագործված վառելիքներում ծծմբի պարունակության մասին Հանձնաժողով կարճ հաշվետվություն են ներկայացնում: Հաշվետվությունը պետք է ներառի տվյալներ ըստ վառելիքի տեսակի փորձարկված նմուշների ընդհանուր քանակի մասին, և հաշվետվության մեջ պետք է նշվեն օգտագործված վառելիքի համապատասխան քանակը և ծծմբի՝ հաշվարկված միջին պարունակությունը: Անդամ պետությունները նաև հաշվետվություն են ներկայացնում նավերում իրականացված ստուգումների մասին և գրանցում ծծմբի միջին պարունակությունը իրենց պետության տարածքում օգտագործված այն վառելիքներում, որոնք չեն մտնում սույն Հրահանգի շրջանակի մեջ:

2. Հիմնվելով, մասնավորապես՝

ա) 1-ին պարբերության համաձայն ներկայացված տարեկան հաշվետվությունների վրա.

բ) օդի որակի, թթվեցման, վառելիքի գների և տարբեր տրանսպորտային միջոցների միջև բեռների վերաբաշխման վրա.

գ) հետևելով Համայնքի նախաձեռնություններին՝ ՄԾԿ-ի մեխանիզմների միջոցով նավերից ծծմբի երկօքսիդի արտանետումների նվազեցման առաջընթացի վրա.

դ) 4ա(4) հոդվածում նշված միջոցների և արտանետումների նվազեցման հնարավոր հետագա միջոցների տնտեսապես արդյունավետ նոր վերլուծության վրա՝ ներառյալ անմիջական և ոչ անմիջական բնապահպանական օգուտները և.

ե) 4(գ) հոդվածի իրականացման վրա.

Հանձնաժողովը մինչև 2008 թվականը հաշվետվություն է ներկայացնում է Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ.

ծծմբի՝ վառելիքի յուրաքանչյուր տեսակի համար սահմանված սահմանային թույլատրելի պարունակության 2-րդ փուլի վերաբերյալ, և

հաշվի առնելով Միջազգային ծովային կազմակերպության աշխատանքները՝ այն ծովային տարածքների վերաբերյալ, որտեղ պետք է օգտագործվեն ծծմբի ցածր (քիչ) պարունակությամբ վառելիքներ:

ա) ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման հավելյալ տարածքների սահմանմանը.

բ) ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքում օգտագործվող վառելիքներում ծծմբի պարունակության կրճատմանը մինչև 0.5%.

գ) այլընտրանքային կամ լրացուցիչ միջոցներին:

3. Մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հաշվետվություն է ներկայացնում տնտեսական գործիքների հնարավոր օգտագործման մասին՝ ներառյալ այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են տարբերակված տուրքերը և գանձումներն ըստ կիլոմետրի, վաճառքի իրավունքով արտանետումների արտոնագրերն ու վնասների փոխհատուցումը:

Հանձնաժողովը կարող է 2008 թվականի վերանայման համատեքստում նախատեսել տնտեսական գործիքների մասին առաջարկների ընդունում՝ որպես այլընտրանքային կամ լրացուցիչ միջոցներ՝ պայմանով, որ հստակորեն ներկայացվեն շրջակա միջավայրի և առողջության հետ կապված օգուտները:

4. Հաշվի առնելով գիտական և տեխնիկական առաջընթացը՝ 2-րդ հոդվածին, Հանձնաժողովը 1-ին, 2-րդ, 3-րդ, 3ա և 4-րդ կետերին կամ 6(2) հոդվածին տեխնիկական հարմարեցումներն անելու համար ընդունում է անհրաժեշտ ցանկացած փոփոխություն : Նման հարմարեցումները չպետք է որևէ անմիջական ազդեցություն ունենան սույն Հրահանգի շրջանակի կամ սույն Հրահանգում նշված վառելիքներում ծծմբի սահմանային թույլատրելի պարունակության վրա:».

8. 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 9

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն պետք է ընդունի իր աշխատակարգը:

9. Ավելացնել սույն Հրահանգի հավելվածով սահմանված տեքստը:

Հոդված 2

Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը մինչև 2006 թվականի օգոստոսի 11-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այս ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Հոդված 3

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 4

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2005 թվականի հուլիսի 6-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Ժ. Բորել Ֆոնտելես

Խորհրդի կողմից՝

Նախագահ Զ. Ստրոու

[1] ՊՏ C 45 E, 25.02.2003թ., էջ 277:

[2] ՊՏ C 208, 03.09.2003թ., էջ 27:

[3] Եվրոպական պառլամենտի 2003 թվականի հունիսի 4-ի եզրակացություն (ՊՏ C 68 E, 18.03.2004թ., էջ 311), Խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 9-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 63 E, 15.03.2005թ., էջ 26) և Եվրոպական պառլամենտի 2005 թվականի ապրիլի 13-ի դիրքորոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում) ու Խորհրդի 2005 թվականի մայիսի 23-ի որոշում:

[4] ՊՏ L 242, 10.09.2002թ., էջ 1:

[5] ՊՏ L 121, 11.05.1999թ., էջ 13: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ 1):

[6] ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 22: 2003 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված հրահանգ:

[7] ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 1: 2003 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված հրահանգ:

[8] ՊՏ L 336, 07.12.1988թ., էջ 1:

[9] ՊՏ, L 324, 29.11.2002թ., էջ 1: Հանձնաժողովի թիվ 415/2004 (ԵՀ) կանոնակարգով (ՊՏ L 68, 06.03.2004թ., էջ 10) փոփոխված կանոնակարգ:

[10] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[11] ՊՏ L 301, 28.10.1982թ., էջ 1: Վերջին անգամ 2003 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված հրահանգ:

[12] ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 1: 2003 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված հրահանգ:

[13] ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1: Հանձնաժողովի 415/2004 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 68, 06.03.2004 թ., էջ 10):

[14] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՈՒՆԱԿԱՆ ՆԱՎԵՐԸ

ՆԱՎԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԱՐԻՆ | ՄԾԿ համարը

ARIADNEPALACE | 2002թ. | 9221310 |

IKARUSPALACE | 1997թ. | 9144811 |

KNOSSOSPALACE | 2001թ. | 9204063 |

OLYMPIAPALACE | 2001թ. | 9220330 |

PASIPHAEPALACE | 1997թ. | 9161948 |

FESTOSPALACE | 2001թ. | 9204568 |

EUROPAPALACE | 2002թ. | 9220342 |

BLUESTAR I | 2000թ. | 9197105 |

BLUESTAR II | 2000թ. | 9207584 |

BLUE STAR ITHAKI | 1999թ. | 9203916 |

BLUE STAR NAXOS | 2002թ. | 9241786 |

BLUE STAR PAROS | 2002թ. | 9241774 |

HELLENIC SPIRIT | 2001թ. | 9216030 |

OLYMPIC CHAMPION | 2000թ. | 9216028 |

LEFKAORI | 1991թ. | 9035876 |

SOPHOKLISVENIZELOS | 1990թ. | 8916607" |